

ՄԵԻՔԱՐ ԱՆԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

XII դ. պատմիչ Մ. Անեցու պատմությունը, որի միայն սկիզբն է պահպանվել, ընդհանրապես արժեքավոր սկզբնաղբյուր է¹: Պատմության «Ծ» գլխում, որտեղ շարադրված են հեղինակի պատմագիտական հայացքները, նա անդրադառնում է իր օգտագործած աղբյուրներին, թվարկում իրեն հայտնի հայ պատմիչների երկերը: Մ. Անեցու Պատմության աղբյուրների այս ցանկը մինչև XII դ. վերջը ստեղծված գրեթե ամբողջ հայ պատմական զրականությունը ընդգրկելով հանդերձ, թերի է և ենթակա լրացումների: Այսպես, արաբական խալիֆների գահակալության տարիների մասին հաղորդումները, ամիսների և նույնիսկ օրերի ճշտությամբ, մեր մատենագրության մեջ այլուր վկայված չեն և ենթադրելի է, որ հեղինակը օգտվել է արաբական կամ պարսկական աղբյուրներից (Մ. Անեցին առավել հմուտ էր պարսկերենին): Պատմության աղբյուրների մասին հեղինակը երբեմն տեղեկություններ է հաղորդում նաև շարադրանքի ընթացքում, իսկ առավել հաճախադեպ են անորոշ «ասէ»-ները, առանց լրացուցիչ հաղորդումների: Վերջին դեպքում Պատմության ուշադիր հետազոտությունը հետաքրքիր և որոշ իմաստով էլ անսպասելի իրողություններ է պարզում: Այսպես, Պատմության «Ծ» գլխի սկզբում, որտեղ հեղինակը դատողություններ է անում իմաստասիրության մասին, բառացի մեջբերումներ կան Մ. Անեցու չհիշատակած Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրության» երկից:

Դ. Ա ն յ ա ղ թ²

Որք միանգամ իմաստասիրութեան տենչան բանից և առ ի նմանէ հեշտութեանց ծայրի միայն մատին հանդիպին նաշակեալք, ամենայն կենցաղական հոգոց բարեաւ մնալ ասացեալք. ողջախոն իմն մուրթեամբ առ այսասիկ վարեալք բերին (էջ 1):

Երրորդ սահման իմաստասիրութեան է, ... որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու: Չորրորդ սահման, ... որ ասեն իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան (էջ 56):

Մ. Ա ն ե ց ի

Սովաւ լուսաւորեալք յոգիս, որպես և ասացին իսկ ներհունքն և առաջինքն և ետուն ապացոյց, եթէ պարտ և պատշաճ է, որք կամին ծայրի միայն մատին զնշակ սունուլ իմաստասիրութեանն, որ յաստուծոյ, ամենայն կենցաղական հեշտութեանց՝ բարեաւ մնալ թողուլ և ծայրագոյն ողջախոն մուրթեամբ մուլի զկնի իմաստութեանն երկնաւորի, զի իմաստասիրութիւն, ասէ, նմանութիւն է աստուծոյ ըստ կարողութեան մարդոյ և իմաստասիրութիւն խոկումն մահու է (էջ 11):

¹ Մխիթարայ Անեցոյ պատմութիւն, ի լոյս ած Գ. Պ. Պետերբուրգ, 1879 (այսուհետեւ Մ. Անեցի):

² Դ. Ա ն յ ա ղ թ, «Սահմանք իմաստասիրութեան», աշխատասիրությամբ Ս. Արեշտայանի, Երևան, 1960:

Համեմատությունը կասկած չի թողնում, որ միջնադարյան հայտնի փիլիսոփայական երկը իր ազդեցությունն է թողել նաև Մ. Անեցու Պատմության վրա:

Թևոն Ա, երասանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» երկը իրրև ճարտասանության և քերթողական արվեստի ձեռնարկ զգալի հետք է թողել հայ մատենագրության մեջ³: Այս աշխատության գլուխներից մեկը նվիրված է պատմությանը, շատ կարևոր հրահանգներ սահմանելով պատմագրողի համար: Պատահական չէ, որ պատմության տեսության կարևորագույն հարցերին՝ պատմության սահմանմանը, նրա տարրերին, պատմությանը ներկայացվող պահանջներին վերաբերող հարցեր քննելիս այս երկին է դիմել նաև Մ. Անեցին: Բնագրերի համեմատությունը ցույց է տալիս դրանց սերտ առնչակցությունը:

Թ Ե Ո Ն Ա Ղ Ե Բ Ս Ա Ն Ղ Դ Ա Գ Ի

Պատմութիւն է բան արտադրական իրաց եղելոց կամ իբր եղելոց: Եւ տառք պատմութեան են վեց. դէմք՝ թէ մի իցէ թե երկու և իրն գործեալ ի դիմացն և տեղին յորում իրքն և ժամանակ ըստ որում գործն ու յեղանակ գործոյն, և վեցերորդ ի վերայ սոցա պատճառքն: (էջ 68)

Եւ առաքինութիւնք պատմութեան երեք՝ հաւաստութիւն, համառոտութիւն, հավանութիւն: (էջ 70)

Երկու բնագրերի որոշակի ընդհանրությունը հնարավորություն է տալիս երկու շտկում կատարել Մ. Անեցու Պատմության բնագրում:

«Բան արտադրական» արտահայտությունը, որը հունարենի «ἰσχυροσ εγχειριστός -ի» բառացի թարգմանությունն է, հոմանիշ է «բան արտաբերականին» և նշանակում է՝ արտաքս բերող, հայտարար, հայտնեալ արտաքս⁴:

Թեոնյան ըմբռնման համաձայն՝ պատմությունը կատարված կամ կատարված ենթադրվող դեպքերի վերհանումն ու լուսաբանումն է: «Արտագրեալ» սխալ ընթերցումը առաջացել է «Գ» և «Դ» տառերի շփոթից և ենթակա է սրբագրման «արտադրեալ» ձևով: Գրչական սխալի արդյունք է նաև երկրորդ աղավաղումը: Պատմությունը ընդօրինակող գրիչը շփոթել է գրությամբ շատ նման «հաւասարութիւն» և «հաւաստութիւն» բառերը:

Այնուհետև Մ. Անեցին շարունակելով իր Պատմությունը, օգտվում է մեկ այլ աղբյուրից. «Որ և այլ ոմն սորին ևս բնութեան վեցիւք սահմանէ մասամբք առնել զպատմութիւնս»⁵:

Մ. Ա Ն Ե Գ Ի

Պատմութիւն, ասէ, է բան արտագրեալ իրաց եղելոց կամ իբր եղելոց:

Եւ տառք պատմութեանն են զ. դէմ, իր, տեղի, ժամանակ, եղանակ, պատճառ:

Եւ երիւք կարգաւորի՝ հաւասարութեամբ, հաւանութեամբ, համառաւտութեամբ: (էջ 13)

³ «Թ է ո վ ն ե ա յ յաղագս ճարտասանական կրթութեանց» աշխատասիրությամբ պրոֆ. Լ. Մանանդյանի, Երևան, 1938, տե՛ս Առաջաբանը, հատկապես էջ 19—1Ը:

⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 375:

⁵ Մ. Ա ն Ե Գ Ի, էջ 13:

Հեղինակի ակնարկած «այլ ոմնը», ինչպես այժմ է բացահայտվում, հայտնի հույն քերական Դիոնիսիոս Թրակացին է: Հայագետ Ն. Ադոնցին տարակուսանք է պատճառել հայ պատմիչների անտեղյակությունը քերականական երկերին, որոնց ծանոթ են եղել միայն Հ. Դրասխանակերտցին և Աղվանից պատմության հեղինակը⁶: Այս դեպքում, բնականաբար, Մ. Անեցու օգտվելը Դ. Թրակացու քերականությունից առանձնահատուկ արժեք է ձեռք բերում: Պարզվում է, որ Մ. Անեցին չի բավարարվել հույն քերականի երկի հին հայերեն թարգմանությունից սոսկ մեջբերումներ կատարելով. նա պատմաբանի հայեցակետով էլ մեկնել և բացատրել է դրանք: Միջնադարում, ինչպես հայտնի է, Դ. Թրակացու քերականությունը միաժամանակ դիտվել է իբրև գրելու, ստեղծագործելու համար անհրաժեշտ կանոնների և դիտելիքների ժողովածու, «քերթողական արուեստի» ձեռնարկ: Ն. Ադոնցը գրում է, որ ոսկեդարյան հայերենով հունարենի «չբարձրագույն»-ն միանգամայն ճիշտ է թարգմանվել «դպրութիւն» բառով, և որ «քերականության արվեստը ընդգրկում էր ոչ միայն քերականությունը, բառի ժամանակակից իմաստով, այլև մի շարք ուրիշ դիսցիպլինաներ»⁷: Հավանաբար դրանցից մեկն է համարվել պատմությունը, և Մ. Անեցին հիշյալ երկը նկատի ունի, երբ գրում է՝ «այլ ոմն վեցիւք սահմանէ մասամբք առնել զպատմութիւնս»: Ըվիրոք, ըստ Թրակացու «Մասունք են նորա (քերականութեան) վեց»⁸: Արդ, վկայակոչենք բնագրերը:

Դ. Թ ր ա կ ա ց ի 9

Նախ՝ վերծանութիւն ներկուռ
ըստ առոգանութեան: (էջ 1)

Մ. Ա ն Ե ց ի

Նախ, ասէ, վերծանութեամբ,
այս է՝ հնոց և նորոց պատմա-
գրութեանց: Ներկուռ, այս ինքն,
բազում անգամ, որպէս զճանա-
պարհ հանապազակոս, ունել ի
սիրտս զմիտս և զիմաստս գրոց:
Առոգանութեամբ, ըստ ժ եղա-
նակի՝ ըստ շեշտի, ըստ պարուկի,
ըստ բութի, ըստ ապաթարցի, ըստ
ենթամնայի և ըստ այլոցն,
գի ի սոցանէ միտք բանին ար-
տայայտին, և թարց սոցին աղա-
ւադին ոյնք ասացուածին: (էջ 13
—14)

Դ. Թրակացին պատմության առաջին մասն է համարել ըստ առոգանության կանոնների արտահայտիչ կարգալը¹⁰: Մ. Անեցու մեկնությունը որոշակիորեն տարբերվում է. նա շեշտը դնում է պատմական երկերի ընթերց-

⁶ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб. 1915, стр. LXXVIII.

⁷ Նույն տեղում, էջ LXXII:

⁸ Նույն տեղում, էջ 1:

⁹ Նշված են Ադոնցի աշխատության համապատասխան էջերը:

¹⁰ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ LXXII:

ման վրա և միաժամանակ ընգծում է, որ «վերածնությունը» պետք է լինի «եներկուտ» բացատրելով այս բառի նշանակությունը և շրտ առոգանությունը՝ «մանրամասն հիմնավորելով վերջինիս անհրաժեշտությունը»:

Դ. Քրակացի

Երկիր՝ զրուցատրություն ըստ ներգոյս բերգողական յեղանակս: (էջ 1)

Մ. Անեցի

Երկիր՝ գրուցատրություն, բայց բերթողականա հանգամանաբ և մի՛ աշխարհաբառ բառով: (էջ 14)

Ըստ Քրակացու, բերականության երկրորդ մասն է կարդացածի մեկնությունն ու բացատրությունը բանաստեղծական փոխաբերություններով ու համատարություններով¹¹: Սակայն հին հայերեն թարգմանության հեղինակը հունարեն «ἐξήγησις» բառը, որը նշանակում է մեկնություն, բացատրություն, շփոթելով «ἐξηγήσεις» բառի հետ թարգմանել է «զրուցատրություն» (— գրույց, ավանդություն)¹²: Քանի որ պատմության մեկ ուրիշ հատվածում այն օգտագործված է զրույցի, ավանդության, պատմական վեպի իմաստով¹³, հավանաբար նույն իմաստն ունի նաև այս հատվածում: Մ. Անեցու համոզմամբ, զրույցներն ու ավանդությունները պետք է գրի առնել ոչ թե այնպես, ինչպես պատմվում են ժողովրդի մեջ՝ աշխարհաբարով, այլ պետք է պատմադրել «բերթողականա հանգամանաբ»՝ բերթողական, բանաստեղծական արվեստի համաձայն:

Դ. Քրակացի

Երիր՝ լեզուաց և հնագէտ պատմութեանց առձեռն բացաարութիւն: (էջ 1)

Մ. Անեցի

Երիր՝ զի այլ լեզուաց և հին պատմութեանց տեղեակ իցէ և առձեռն ունիցի: (էջ 14)

Հաջորդ հատվածում, Մ. Անեցին յուրովի է հասկանում և մեկնում Քրակացու բերականությունը:

Դ. Քրակացի

Չորիր՝ ստուգաբանութեան գիտ: (էջ 1)

Մ. Անեցի

Չորիր՝ ասէ, ստուգաբանութեան գիտ, զի գիտէ ի միտս, զստոյգն զատել ի ստոյն: (էջ 14)

Եթե Դ. Քրակացին բերականության չորրորդ մասը համարել է ստուգաբանությունը, այն հասկանալով իբրև ուսմունք բառերի ծագման և ուղղագրության մասին¹⁴, ապա Անեցու ընկալումն ու մեկնումը այլ է: Իբրև պատմիչ, բնականաբար, նա ստուգաբանում է համարել ոչ թե լեզվաբանական, այլ իմաստային և պատմական ստուգաբանումը, ըստ էության, պատմական ճշմարտության վերականգնումը: Շարունակության մեջ մեր առջև դարձյալ պատմաբանն է:

¹¹ Նույն տեղում:

¹² Ա դ ո ն ց, նշվ. աշխ., էջ CXXXV, հմտ նաև ՆՁԲ, հ. Ա, էջ 753:

¹³ «Եւ արդ՝ է բանս սակս բացայայտութեան անցէլոց իրաց, լուաց և վատաց... պէս պէս և զանազան զրուցատրութեանց» Մ. Անեցի, էջ 2:

¹⁴ Ա դ ո ն ց, նշվ. աշխ., էջ LXXII:

Դ. Թրակացի

Հինգերի՝ համեմատութեան
տեղեկութիւն: (էջ 1)

Մ. Անեցի

Հինգեր՝ համեմատութեան տեղեկութիւն, այն է՝ ճանաչել զնրմանութիւն բանից առ բանս, արգելք Սողոմոնի՞ է բանս, արգելք՝ Մովսէսի՞, նորո՞յս եթէ հնոյն, մերո՞յս եթէ արտաքնոց, ճշմարտութեանն, եթէ առասպելին: (էջ 14)

Իբրև այդպիսին նա պահանջում է համեմատել և քննել տեղեկությունները, պարզել դրանց ծագումն ու կապը, ստուգությունն ու արժանահավատությունը, զատորոշել ճշմարտությունն ու առասպելը: Մ. Անեցին, միաժամանակ, անտեղյակ չի եղել Թրակացու քերականության հայ մեկնություններին. նա գրում է. «Այլ և է համեմատութիւն, զբայս և զբանս և զառողանութիւնս համեմատաբար դնել առ միմեանս»¹⁵: Ավարտենք համեմատությունը.

Դ. Թրակացի

Վեցերի՝ դատումն քերթածաց,
նա եւ լաւագոյն է յամենեցունց
որք ներ արհեստիս են: (էջ 1—2)

Մ. Անեցի

Եւ վեցերորդն ևս, որ ասէ՝ դատումն քերթածաց, կարի պիտանեգոյն է պատմութեան, զի սեփականադոյն է և յարմար: (էջ 14—15)

Այսպիսով, պարզվում է, որ Մ. Անեցին իր Պատմությունը գրելիս, բացի իր հիշատակած աղբյուրներից, օգտվել է նաև Դ. Անհաղթ «Սահմանքից», Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» երկից, իսկ 'Ի. Թրակացու քերականության հին հայերեն թարգմանությունից բառացի քաղել է որոշ հատվածներ: Պատմագրողի հայեցակետով մեկնելով ու բացատրելով դրանք, նա դրանք վերափոխել է պատմություն երկասիրողի համար անհրաժեշտ կետերի: Ուշագրավ է, թե ինչ վարպետությամբ է վերաշարադրել Մ. Անեցին երկու տարբեր հեղինակների մտքերը, այնպես է զուգակցել դրանք, որ կասկածներ չեն առաջացել ոչ միայն նրա օգտագործած աղբյուրների, այլև հատվածի ամբողջության նկատմամբ: Երկու հեղինակների այնքան տարբեր հայացքներից ու սահմանումներից ձուլված պատմահայեցությունը կուռ է, նպատակասլաց և, որքան էլ զարմանալի է՝ զուրկ հակասություններից: Մ. Անեցու պատմության աղբյուրների բացահայտումը լույս է սփռում այն ուղիների և եղանակների վրա, որոնցով ղեկավարվել է հեղինակը իր Պատմությունը գրելիս, իսկ երբեմն էլ հնարավորություն է ընձեռում սրբագրել Պատմության բնագիրը:

¹⁵ Մ. Անեցի, էջ 14:

ОБ ИСТОЧНИКАХ ИСТОРИИ МХИТАРА АНИЙСКОГО

А. Г. МАРГАРЯН

Р е з ю м е

До нас дошла только первая часть труда историка XII в. Мхитара Анийского, которая, хотя не является полноценным историческим источником, но не лишена определенного интереса при освещении филологических вопросов.

В пятой главе своего труда автор сам перечисляет те исторические труды, которые он имел под рукой. Однако, как выясняется, он пользовался и другими источниками. М. Анийский использовал в основном три источника. Несколько положений о науке, о философии заимствованы им из известного труда армянского философа Давида Непобедимого «Определение философии».

М. Анийский определяет элементы и достоинства истории, следуя пособию риторики Теона Александрийского почти буквально.

Наиболее любопытен тот факт, что цитаты из «Грамматики» Дюнисия Фракийского М. Анийский разъясняет с точки зрения историка.